ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

« 12 » « հունիս » 2020 թ
ք. Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ N 55
ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Մարտիրոս գյուղի միջնակարգ հանրակրթական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2020 թվականի հունիսի 9-ի N 12 գրությունը և Երջանիկ Մարտիրոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2020 թվականի հունիսի 15-ից Երջանիկ Մարտիրոսյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Մարտիրոս գյուղի միջնակարգ հանրակրթական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 / հինգ/ տարի ժամկետով:

2. 2020 թվականի հունիսի 15-ից լուծել «ՀՀ Վայոց ձորի մարզի Մարտիրոսի գյուղի միջնակարգ հանրակրթական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Երջանիկ Մարտիրոսյանի հետ կնքած 2019 թվականի հուլիսի 10-ի N419 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

6/12/2020

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ